2020, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (565)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

3 եւ 4 սեպտեմբերի

Արարատյան հայրապետական թեմի հոգեւոր դասին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Արարատյան հայրապետական թեմի քաղաքամայր Երեւանի եւ Արարատի մարզի հոգեւոր տեսչության հոգեւոր սպասավորներին՝ գլխավորությամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի եւ Արարատի մարզի հոգեւոր տեսուչ Գեւորգ եպս Սարոյանի:

Հանդիպումներին Հանրակրթության պետական եւ առարկայական չափորոշիչների նախագծերի, դրանցում առկա խնդիրների եւ հնչեցված մտահոգությունների շուրջ զեկույց ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը՝ անդրադառնալով նաեւ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի շուրջ ստեղծված կացությանը:

Ծավալուն քննարկման ընթացքում քահանա հայրերն իրենց համայնքների անունից ինքնությունը եւ ամբողջապես հաղորդ դարձնելու աշակերտներին Հայոց Եկեղեցուն, նրա դավանանքին, տոնածիսական համակարգին, խորհուրդներին, քրիստոնեական ու ազգային արժեհամակարգի հիմնարար սկզբունքներին եւ քրիստոնեական բարոյագիտությանը:

Կարեւորելով Եկեղեցու առաքելությունը քրիստոնեական-ազգային արժեհամակարգի կերտման ու պահպանման գործում, նրա կրթադաստիարակչական գործունեությունը եւ հովվական աշխատանքում սերտ կապն ուսումնական հաստատությունների հետ՝ հոգեւոր սպասավորները մտահոգիչ նկատեցին վերջին ժամանակներում դպրոցներում եւ կրթական այլ հաստատություններում անցկացվող ազգային-եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներին հոգեւորականների ներգրավման եւ մասնակցության հարցում տնօրինությունների կողմից դրսեւորվող զգուշավոր եւ մերժողական կեցվածքը:

մտահոգություն արտահայտեցին կրթական բարեփոխումների իրականացմանը միտված փաստաթղթերի մշակման գործընթացի, մտավորականների եւ գիտակրթական հաստատությունների կողմից բարձրաձայնված խնդիրների եւ ակնկալվող վերջնարդյունքների առնչությամբ՝ կարեւորելով ազգային նկարագրով, հոգեւոր-ազգային արժեհամակարգով ամուր հայորդու, ՀՀ քաղաքացու ձեւավորումը: Անընդունելի նկատվեց նաեւ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի առնչությամբ ԿԳՄՍ նախարարության որդեգրած մոտեցումը, որի հետեւանքով այլ առարկաների մեջ տարրալուծման ճանապարհով դուրս է մղվում ուսուցանվող առարկայի ուսումնական նյութի գերակշիռ մասը, աղճատվում առարկայի նպատակն ու առաքելությունը՝ կերտելու հայ

«Կենսաբանություն» առարկայի պետական առարկայական չափորոշչում Էվոլյուցիոն տեսության եւ առարկայական չափորոշիչների նախագծերում սեռական դաստիարակությանը վերաբերող թեմաների մասին զեկույց ներկայացրեց Դիվանատան եկեղեցական-ժողովական գրասենյակի պատասխանատու Տիգրան քհն. Բադիրյանը՝ մասնավորաբար անդրադառնալով այդ կապակցությամբ կյանքի եւ ընտանիքի սրբության հասկացություններին: Համացանցային գրագիտության եւ հոգեւոր քարոզչության նպատակով սոցիալական ցանցերի արդյունավետ գործածության հնարավորությունների մասին զեկույցով հանդես եկավ Համացանցային ծառայությունների գրասենյակի տնօրեն Համբարձում քհն. Դանիելյանը:

Նկատի ունենալով տեղեկատվական տեխնոլոգիաների եւ սոցցանցերի հսկայական ազդեցությունը հասարակության կյանքում՝ ներկայացված նյութի շուրջ քննարկումներում կարեւորվեց հոգեւոր հովիվների կողմից այդ միջոցների ծառայեցումը հոգեւոր արժեքների սերմանման եւ թեմական ու հովվական աշխատանքի լուսաբանման գործին:

Սոցցանցերում գռեհկաբանության, գործածվող լեզվի եւ տիրող անհանդուրժողական մթնոլորտի վերացման հարցում կարեւորվեցին նաեւ հոգեւոր սպասավորների ակտիվությունը եւ հետեւողական աշխատանքը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանգամանորեն անդրադարձավ քահանա հայրերի բարձրաձայնած հարցերին, որոնք վերաբերում էին հովվական ծառայությանը, Եկեղեցու կրթադաստիարակչական եւ սոցիալական առաքելությանը, համավարակի շրջանում առկա դժվարությունների հաղթահարմանը, ազգային եւ հայրենական կյանքը հուզող զանազան խնդիրների առնչությամբ Եկեղեցու որդեգրած դիրքորոշումներին:

Վերջում Հայոց Հովվապետն իր հայրական օրհնությունը փոխանցեց քահանա հայրերին՝ հորդորելով ակտիվ, նախանձախնդիր եւ համարձակ լինել հովվական ծառայության մեջ՝ նպաստելով Եկեղեցու առաքելության առավել արդյունավորմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցու առաքելությունը բոլոր ժամանակներում եղել է սպասավորությունը հայ ժողովրդին՝ հանուն նրա հոգեւոր զորացման, ազգային ինքնության պահպանման, ազգային նվիրական իղձերի իրականացման եւ հայրենիքի անկախ ու խաղաղ կյանքի կերտման:

7 սեպտեմբերի

Հայորդյաց տների պատասխանատուներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հովանու ներքո գործող հայորդյաց տների տնօրեններին ու փոխտնօրեններին:

Հանդիպման սկզբում Վանաձորի հայորդյաց տան հոգեւոր տեսուչ Հովհաննես քհն. Մարուքյանը հայորդյաց տների պատասխանատուների անունից իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հայորդյաց տների հանդեպ ցուցաբերվող հայրական խնամքի ու հոգածության համար:

Այնուհետեւ իր օրհնության եւ գնահատանքի խոսքը ներկաներին ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ մեծապես կարեւորելով հայորդյաց տների առաքելությունը: Նորին Սրբությունն ընդգծեց, որ արտադպրոցական կրթության այդ կենտրոնների ստեղծման նպատակն էր 1990-ական թվականների դժվարին շրջանում փողոցի ազդեցություններից կտրել երեխաներին ու պատանիներին եւ նրանց համար ապահովել ճիշտ խնամք ու դաստիարակություն՝ առիթ ընձեռելով զարգացնելու նրանց ձիրքերն ու շնորհները, հմտությունները՝ արվեստներում, արհեստներում եւ սպորտում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ ժամանակին այդ տեսլականին վստահեցին ՀՀ իշխանությունները՝ այդ նպատակով Եկեղեցուն հատկացնելով երեք կառույցներ Երեւանում, իսկ կենսագործմանը նպաստեց ՀԲԸՄ-ի նախագահ հոգելույս Լուիզ Մանուկյան Սիմոնը: Վեհափառ Հայրապետի խոսքով՝ 1993 թ. հաստատված երեք հայորդյաց տները, ՀԲԸՄ-ի համագործակցությամբ ու զորակցությամբ, ամուր հիմք դարձան այսօր արդեն կայացած, արդեն ավանդույթներ ձեւավորած ցանցի, որն ընդգրկում է հայորդյաց յոթ տները Երեւան, Գյումրի, Վանաձոր, Էջմիածին, Աշտարակ քաղաքներում եւ Մանրանկարչության կենտրոնը Երեւանում: Հայոց Հովվապետն ուրախությամբ արձանագրեց, որ հայորդյաց տները, ուր այսօր ուսանում է շուրջ հինգ հազար աշակերտ, իրենց առաքելության ընթացքում կրթել ու դաստիարակել են տասնյակ հազարավոր հայորդիներ: Այս առումով Հայրապետը հույս հայտնեց, որ ժամանակի ընթացքում հայրենասեր բարերարների աջակցությամբ հնարավոր կլինի նման կրթական կենտրոններ հաստատել նաեւ այլ քաղաքներում:

Անդրադառնալով հայորդյաց տների կարեւոր առաքելությանը՝ Նորին Սրբությունը հաստատեց, որ հայորդյաց տներում ոչ միայն բացահայտվում ու զորանում են հայորդիների տաղանդներն ու շնորհները, այլեւ կերտվում է նրանց նկարագիրը՝ խարսխված ազգային եւ հոգեւոր արժեքների վրա: *«Ձեր շրջանավարտ մանուկներն ու պատանիներն են մեր ապագան, որ պիտի կերտեն թե՛ իրենց կյանքի, թե՛ մեր հայրենիքի ու ազգի հաղթանակները: Այսօրվա աշխարհում ավելի ու ավելի է ընդգծվում կարեւորությունը սեփական ակունքների ճանաչողության, ազգային ոգու զորացման: Ձեր առաքելությունն է նաեւ զորացնել նրանց սրտերում ազգային-հոգեւոր արժեքները»*,— նշեց Վեհափառ Հայրապետը՝ կարեւորելով մանկավարժների աշխատանքը ազգի նվիրյալ զավակներ պատրաստելու գործում:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց հայորդյաց տների տնօրեններին, մանկավարժներին՝ նախանձախնդիր եւ հետեւողական գործունեության համար:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական օրհնությամբ Մեր շնորհավորանքներն ենք բերում ուսանող եւ աշակերտ մեր զավակներին եւ կրթական գործի բոլոր նվիրյալներին՝ Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով:

Դարեդար մեր ժողովուրդը սիրո եւ մեծարումի զգացումով է ապրել գիտելիքի ու դպրության հանդեպ, պահպանել այն հակառակ ամեն փորձության եւ ավանդել մեզ իբրեւ անգին ժառանգություն, որը եւ դարձել է մեր հարատեւության գրավականներից մեկը:

Աշխարհում այսօր տարածված համավարակի հետեւանքով բազում մարտահրավերներ են առաջ եկել, դժվարություններ են հառնել նաեւ մեր կրթական հաստատության առջեւ ուսումնական գործընթացում: Մենք աղոթք ենք վերառաքում առ Բարձրյալը, որ անխոչընդոտ մեկնարկի ուսումնական տարին եւ մեր զավակներին տոգորի նոր հույսերով, ուսումնատենչ ոգով ու անկուն ջանասիրությամբ, որպեսզի գիտելիքն ու իմացությունը, հոգեւոր եւ բարոյական արժեքները շարունակաբար առանցքային եւ հիմնարար լինեն մեր ժողովրդի կյանքում:

Աղոթում ենք, որ Տերը բազում հաջողություններով պսակի մեր սաների ուսումնառության ընթացքը ու զորակից լինի մեր մանկավարժներին եւ կրթության գործի բոլոր մշակներին իրենց նվիրական եւ պատասխանատու կոչման եւ առաքելության մեջ:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աստվածային սերն ու Սուրբ Հոգու առատ շնորհները միշտ մեր ժողովրդի հետ լինեն, ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հայորդյաց տների պատասխանատուներին

Սկիզբը՝ էջ 1

Ամենայն Հայոց Կաթողիկոսը երախտագետ զգացումներով իր գնահատանքը փոխանցեց նաեւ ՀԲԸՄ-ին ու բոլոր այն բարերարներին, որոնք աջակից ու զորակից են Մայր Աթոռին՝ հայորդյաց տների սաների կրթության ու դաստիարակության նվիրական առաքելության մեջ:

Նորին Սրբությունը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց հայորդյաց տների նորանշանակ հոգեւոր տեսուչ, Մայր Աթոռի միաբան Մաղաքիա վրդ. Ամիրյանին՝ մաղթելով վերջինիս հաջողություններ:

Հայր սուրբն իր հերթին շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին վստահության համար՝ հավաստիացնելով, որ կներդնի բոլոր ջանքերը՝ Նորին Սրբության՝ հայորդյաց տների հետ առնչվող իղձերն ու նպատակները կյանքի կոչելու համար:

Զրույցի ընթացքում քննարկվեցին համավարակի պայմաններում նոր ուսումնական տարվա կազմակերպման, կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման հետ կապված հարցեր:

8 սեպտեմբերի **«Հռադամիզդ» օպերայի ստեղծագործական խմբին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 2021 թ. Հայաստանում բեմադրվելիք «Հռադամիզդ» օպերայի ստեղծագործական խմբին՝ ուղեկցությամբ Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Գագիկ Մանասյանի:

Ողջունելով տարբեր երկրներից ժամանած հանրահայտ արվեստագետների այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ նրանց գեղեցիկ նախաձեռնությանը, որը մեծ բավականություն եւ խանդավառություն պիտի պարգեւի հայ հանդիսատեսին: Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ստեղծագործական խմբին, նաեւ կարեւորեց այդ մշակութային ձեռնարկի շուրջ տարբեր ժողովուրդների զավակների համախմբումը, ինչը մեծապես պիտի նպաստի համագործակցության ոգու զորացմանը եւ մշակութային կապերի ամրապնդմանը:

Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Գագիկ Մանասյանը, դիրիժոր Ջորջ Փահլիվանյանը եւ ռեժիսոր Ռոբերտ Ստուրուան իրենց հերթին խոսեցին «Հռադամիզդ» օպերայի բեմադրման կարեւորության եւ առանձնահատկության մասին, Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեցին տարվող աշխատանքների վերաբերյալ:

Հանդիպումից հետո ստեղծագործական խմբի անդամներն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:

9 սեպտեմբերի **«Ազգային արժեքների պաշտպանություն» նախաձեռնության ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ազգային արժեքների պաշտպանություն» նախաձեռնության համակարգող խմբին:

Նախաձեռնության անդամները Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին նախաձեռնության առաքելությունն ու ծրագիրը, անդրադարձան նախաձեռնության հեղինակած օրենքի նախագծին՝ ուղղված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, հայոց լեզվի, մշակութային ժառանգության, ընտանիքի եւ մանկության պաշտպանությանը:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց հայորդիներին եւ կարեւորեց ազգային արժեքների պաշտպանության հարցում նրանց ազնիվ ձգտումներն ու նախաձախնդրությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ հայոց ինքնությունը դարերով կերտած ազգային-հոգեւոր արժեքները եւ նախնիներից ավանդված ժառանգությունը գրավականն են ազգի հարատեւության եւ մեր անկախ պետականության ամրության:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց



Սեպտեմբերի 11-ին 2020—2021 թթ. ուսումնական նոր տարեշրջանի մեկնարկի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Սուրբ Տրդատ արքայի բաց խորանին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց կրթության մշակների ավանդական օրհնության կարգ:

Արարողությանը մասնակցում էին կրթական պետական կառույցների ներկայացուցիչներ, բուհերի ռեկտորներ եւ ՀՀ մի շարք դպրոցների մանկավարժներ:

Օրհնության արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու պատգամը բերեց կրթության նվիրյալներին:

«Հարգելի՛ ռեկտորներ,

Սիրելի՛ մանկավարժներ,

Կրթության ոլորտի պատվարժան պատասխանատուներ,

Ուրախ ենք վերստին ընդունելու ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ուսումնական նոր տարվա սկզբին բարի ավանդույթով դուք ուխտավորաբար ձեր քայլերն եք ուղղել Մայր Աթոռ՝ զորանալու ձեր հավատքի ու կոչման մեջ եւ գովելի եռանդով ու անմնացորդ սիրով շարունակելու նոր սերնդին կրթելու ձեր նվիրական առաքելությունը:

Գոհունակ սրտով կատարեցինք կրթության մշակներիդ օրհնության կարգը՝ հայցելով Տիրոջ շնորհները, զորակցությունն ու առաջնորդությունը ձեզ: Մեր ժողովուրդը մշտապես բարձրագույն պատվի է արժանացրել կրթության մշակներին՝ միջնադարյան վարդապետներից մինչեւ մերօրյա ուսուցիչներ, խոնարհվել նրանց առաքելության առջեւ, քանզի գիտակցել է ուսման եւ լուսավորության արժեքը կյանքում եւ դերակատարությունը ազգի ապագայի կերտման գործում: Այս տարի, սիրելինե՛ր, առանձնակի իրավիճակում ենք հանդիպում միմյանց: Համավարակի առաջ բերած խնդիրները հուզում են մեր կյանքը, դժվարություններ են հառնած նաեւ կրթության կազմակերպման բնագավառում: Մենք հավատում ենք, որ բոլոր դժվարություններով հանդերձ՝ դուք՝ կրթության գործի նվիրյալներդ, ջանք ու եռանդ չեք խնայելու, որպեսզի գիտելիք եւ իմացություն փոխանցեք եւ կրթեք մեր զավակներին: Ձեր անդուլ աշխատանքով է, որ ուսումնական տարին պիտի լինի հաջողված՝ գոհունակություն պարգեւելով ինչպես ձեզ, այնպես եւ սովորողներին, նրանց ծնողներին եւ մեզ բոլորիս: Ձեր հաղորդած գիտելիքները, սերմանած հոգեւոր արժեքները ուժ եւ զորություն են մեր հայրենիքի ու մեր ժողովրդի համար: ➥ էջ 3

Սուրբ Խաչվերացի տոնին Մայր Աթոռում կատարվեց քահանայական ձեռնադրություն

Սեպտեմբերի 13-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանդիսավորությամբ նշեց հինգ տաղավար տոներից վերջինը՝ Խաչվերացը: Տոնի առիթով Սուրբ Տրդատի բաց խորանին մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը: Օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Պատարագի ընթացքում կատարվեց նաեւ քահանայական ձեռնադրություն: Արշակ սրբազանի ձեռամբ քահանայական ձեռնադրության եւ օծման արժանացավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող չորս սարկավագ:

Ձեռնադրության ընթացքում Արշակ եպիսկոպոսը քահանայության կոչեց նորընծաներին, աղոթքներից հետո սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ նրանց շնորհելով նոր անուններ: Վարագդատ սրկ. Քոչարյանը վերակոչվեց Հայկ քահանա, Ատոմ սրկ. Ղարագյոզյանը՝ Հայասա քահանա, Վահան սրկ. Սահակյանը՝ Հայկազուն քահանա եւ Նարեկ սրկ. Կիրակոսյանը՝ Արմեն քահանա:

Ձեռնադրության խորհրդի կատարման ավարտին նորաօծ քահանաները նաեւ իրենց անդրանիկ օրհնությունը բաշխեցին ներկաներին:

Այնուհետեւ ձեռնադրող Արշակ սրբազանը իր խոսքն ուղղեց ներկա հավատավոր ժողովրդին՝ անդրադառնալով Խաչվերացի տոնի խորհրդին, ինչպես նաեւ քահանայական ձեռնադրությանը: Շնորհավորելով ներկաներին առանձնակի ոգեւորությամբ ու ներշնչումով տոնախմբվող Սուրբ Խաչի Վերացման տոնի առիթով՝ սրբազանը մասնավորաբար ասաց. *«Նյութապաշտ աշխարհում դժվար է հասկանալ Սուրբ Խաչի՝ իրականում անփոխարինելի այդ սրբության համար քրիստոնյաների վճարած զոհողությունների ու զրկանքների իմաստը: Նյութակենտրոն այդ աշխարհում մարդկային պատկերացումները, վարքագիծն ու հարաբերությունները, վերջին հաշվով նաեւ պետությունների քաղաքականությունը, կառուցվում են առօրեական հաշվենկատությամբ՝ ուղղված այլոց նկատմամբ առավելության հաստատմանը, ազդեցության ընդլայնմանը եւ կամ աշխարհաքաղաքական հավակնությունների բավարարմանը: Մինչդեռ քրիստոնյայի համար խաչն է իմաստն ու նպատակը կյանքի, որն անտրոհելի ու անբաժանելի է անմահ Խաչյալից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսից:*

Եվ ուրեմն՝ լինել Քրիստոսի հետեւորդ նշանակում է լինել Խաչի ուխտավոր: Աստված Ինքը անցավ խաչի ճանապարհը, որ նույն է թե՝ աստվածային ծրագրի իրագործման համար կրեց զրկանքներ ու տառապանքներ, անցավ չարչարանաց ու մահվան ճանապարհը: Խաչի խորհուրդը բնական թե հարուցված խոչընդոտների, գիտակցված զոհողությունների ու զրկանքների միջոցով փրկության ու հաղթանակի հասնելու խորհուրդն է: Այսպես հարություն առավ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս՝ դիմակայելով ու հաղթահարելով փորձություններն ու հալածանքները, իսպառ մերժելով բոլոր գայթակղությունները»:

Արշակ եպիսկոպոսը հաստատեց, որ Տիրոջ չարչարանքն ու մահն են անսուտ վկայությունը Նրա առաքելության ճշմարտության, եւ այս համոզումն է ոգեշնչում մարդկանց դառնալու հետեւորդը Քրիստոսի եւ ուխտավորը Խաչի՝ ընդգծելով, որ Խաչի ճանապարհը պսակվում է հարությամբ ու հաղթանակով:

Ապա պատարագիչ սրբազանը, իր ուրախությունը հայտնելով նորընծա քահանաներին, որոնք ուխտեցին դառնալ խաչակիրներ եւ Խաչի ճանապարհի ուխտավորներ, նշեց, որ մեծ է պատիվը եւ աննկարագրելի պատասխանատվությունը դառնալու Քրիստոսի ճանապարհորդակիցները, ուղիղ ժառանգորդը լուսամիտ, սրբակենցաղ ու հռչակավոր հոգեւոր մեր հայրերի՝ Լուսավորիչ, Սահակ Պարթեւ ու Շնորհալի հայրապետների, կրելու նույն տիտղոսն ու աստիճանը, ինչ Մաշտոց ու Նարեկացի աստվածախոս վարդապետները:

«Սիրելի՛ եղբայրներ, այս ամբողջ պատվի ու պատասխանատվության մեջ դյուրին ճանապարհ չէ սպասում ձեզ: Քիչ չեն այցելելու ձեզ հուսախաբությունները, միշտ չէ, որ մեծարանքով պիտի ընդունեն ձեզ եւ գովասանքով արտահայտվեն ձեր մասին: Ոմանց համար դուք լինելու եք միջնադարյան խավարամտության ու հնաոճության ժամանակավրեպ քարոզիչներ, ուրիշների համար տաղտկալի ու զավեշտական եք թվալու կյանքի ու մահվան, փրկության ու հավիտենական կյանքի մասին ձեր մտորումներն ու քարոզները:

Քրիստոսին հետեւելու, խաչի ճանապարհի ուխտավոր լինելու ձեր հավատքի ու համոզումների, հոգեւոր, բարոյական ու ազգային սրբությունների պաշտպանության ու քարոզության համար կլինեն դեպքեր, երբ կհատուցեք ձեր առողջությամբ ու բարեկեցությամբ: Կյանքում առաջացող բնական ու հարուցված խոչընդոտներն ու զրկանքները հաճախ դուք կկրեք խոր միայնության մեջ՝ միակ, բայց եւ անփոխարինելի սփոփանք գտնելով Աստծու հետ զրույցներում: Եվ այս է Աստծու հանդեպ հավատքն ու հավատարմությունը, մխիթարության մեր աղբյուրը: Այդ հավատքն է ուժ ու զորություն պարգեւում հոգեւորականներիս: Մեր պատասխանատվությունն անվրեպ աճում է այն գիտակցությամբ, որ մենք պահապաններն ենք Տիրոջից ժառանգություն ստացած Հայոց հոգեւոր ամրոցի...

Սիրելի՛ եղբայրներ, Հայոց այդ հոգեւոր ամրոցի, սրբազան մեր հայրենիքի հիշատակները կրկին-վերստին ձեր հոգիներում անջնջելիորեն դրոշմելու համար մենք հայկաշունչ նոր անուններով կոչեցինք ձեզ, որպեսզի միշտ հիշեք ձեր պարտքը ձեզ ծնած ու սնած ժողովրդի հանդեպ, միշտ հիշեք հայոց հոգեւոր ու ազգային ինքնության պաշտպանության, պահպանության ու զորացման ձեր բացառիկ կոչման ու պատասխանատվության մասին»,— ասաց Արշակ սրբազանը:

Վերջում սրբազան հայրը նորընծաներին մաղթեց Տիրոջ օրհնությունն ու զորակցությունը՝ ուխտի մեջ հաստատուն, հավատքի մեջ անսասան եւ նվիրումի մեջ աննվազ մնալու համար:

Արշակ եպիսկոպոսը քահանայական ձեռնադրության առիթով իր շնորհավորանքները փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ մաղթելով նրան արդյունավոր գահակալության երկար տարիներ: Սրբազանը շնորհավորեց նաեւ մայրավանքում եւ այլուր սպասավորող բոլոր եկեղեցականներին՝ լծակից նոր եղբայրներով հարստանալու կապակցությամբ:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանները եւ ներկա հոգեւորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան, շնորհավորեցին քահանաներին եւ համբուրեցին վերջիններիս մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով նրանցից անդրանիկ «Ողջույն»-ը:

Նորաօծ քահանաները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության եւ աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:

Նույն օրը, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, քահանայական ձեռնադրություն կատարվեց Արցախի թեմում՝ Գանձասարի վանքի Սուրբ Հովհաննես Մկրտչի եկեղեցում: Ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանի՝ քահանայական ձեռնադրության եւ օծման արժանացավ Մայր Աթոռի միաբան եւս երկու սարգավագ՝ Մհեր սրկ. Հարոյանը, որը վերակոչվեց Մխիթար քահանա, եւ Հրաչ սրկ. Հայրապետյանը՝ վերակոչվելով Խաչատուր քահանա: Նորընծաներն իրենց քառասնօրյա պատրաստության եւ աղոթքի շրջանը կանցկացնեն Գանձասարի վանքում:

կրթության մշակների օրհնության կարգ



➥ էջ 2 *Դուք միտք ու հոգի կրթողներ եք, այդ պատճառով ձեր առաքելությունն իրականացնում եք ինչպես մասնագիտական կարողություններով, այնպես եւ ձեր հեղինակությամբ, ձեր դավանած արժեքներով, ձեր սիրով առ հայրենին եւ ձեր հավատքով առ Աստված: Ձեր աշակերտները կրում են կնիքը ոչ միայն ձեր մատուցած գիտելիքների, այլեւ ձեր հոգու եւ ներաշխարհի, ձեր ազգասիրության ու հայրենանվիրումի:*

Գիտելիքն ու ուսումը միշտ էլ առաջնահերթություն են եղել մեր Եկեղեցու առաքելության ծիրում: Սահակ-Մեսրոպյան դպրոցը ժամանակին համահունչ կրթություն ապահովելու իր դարավոր ավանդներով դարձել է գրավականը մեր ազգային-քրիստոնեական ինքնության եւ մեր ժողովրդի գոյատեւման ու հարատեւության: Այսօր նույնպես մեր Եկեղեցին իր պարտքն է նկատում հայրենի պետությանն աջակցել՝ կրթելու մեր ժողովրդի արժանավոր զավակներ եւ մեր երկրի գիտակից քաղաքացիներ, զարգացած, նպատակասլաց եւ պատասխանատվության բարձր զգացումով սերունդ, որը պատրաստ կլինի դիմագրավելու ժամանակի մարտահրավերներին, տեր լինելու մեր երկրի ու ժողովրդի ապագային:

Այսօր Մենք կուզենայինք անդրադառնալ նաեւ կրթության բնագավառում ձեռնարկվող փոփոխություններին, որոնք, մասնավորապես հայագիտական առարկաներին վերաբերող դիրքորոշումներում, մտահոգություն, անհանգստություն եւ հուզում են առաջացրել մեր ժողովրդի, հատկապես՝ մտավորականության շրջանում: Մասնավոր մտահոգություն է Մեզ համար նաեւ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի զեղչումը՝ այլ առարկաների մեջ տարրալուծման ճանապարհով: Գիտակրթական հաստատությունների, ինչպես եւ մասնագիտական շրջանակների հնչեցրած տեսակետներն ու առաջարկները ամենայն լրջությամբ նկատի առնելը, բարձրաձայնված խնդիրները համակողմանի քննարկելը պիտի նպաստեն կրթական բարեփոխումների ընթացքին: Ցավում ենք նաեւ, որ Կրթության եւ գիտության նախարարության կողմից տակավին չեն իրականացվել քայլեր՝ խորհրդակցելու եւ համագործակցելու Մայր Աթոռի կրթական հարցերով ենթախմբի հետ: Մեր համոզումն է, որ «Հայոց Եկեղեցու պատմությունը» պիտի դասավանդվի որպես առանձին առարկա, իբրեւ վկայություն մեր կյանքում Հայոց Եկեղեցու հարամնա առաքելության եւ սխրանքների արժեւորման, երեխաներին ծանոթացնելով ոչ միայն մեր Եկեղեցու պատմությանը, այլեւ Աստվածաշնչի պատգամներին, քրիստոնեության հիմունքներին ու արժեքներին, մեր Եկեղեցու խորհուրդներին ու ծեսերին, բարեպաշտական սովորություններին: Իբրեւ ժողովուրդ՝ մենք մեզ քրիստոնյա գիտենք: Ուրեմն՝ պիտի ճանաչենք մեր Եկեղեցին, գնահատենք նրա առաքելությունը, որպեսզի մեր զավակները մանկուց ջերմանան ու լցվեն հավատքով, լինեն Աստծո սուրբ ներկայության բնակարան, բարիքի ձգտող, մարդասեր, ազնիվ, օրինապահ ու արդարամիտ: Սաղմոսերգուի շուրթերով անտեղի չի ասված՝ «Երանի այն ազգին, որի օգնականը տեր Աստված է» (Սաղմ. ԼԲ 12): Ինքնաճանաչ, քրիստոնեական արժեքները կարեւորող, աստվածասեր եւ հայրենասեր սերունդ կրթելով՝ մենք պիտի զորանանք, զարգանանք ու առաջադիմենք եւ ընթանանք դեպի մեր նվիրական նպատակների իրագործումը:

Սիրելի՛ ռեկտորներ, մանկավարժներ, կրթության ոլորտի պատասխանատուներ, ուսումնական նոր տարվա առիթով հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք վերստին բերում ձեզ: Մաղթում ենք, որ երկնային բարիքները մշտապես հեղվեն ձեր ընտանեկան հարկերից ներս, եւ Աստված Սուրբ Հոգու շնորհներով զարդարի ձեզ եւ ձեր սաներին, նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ պարգեւի գիտության ու կրթության շավիղներում ձեր եռանդագին ու շնորհակալ առաքելության ճանապարհին:

Թող Տերը խաղաղության մեջ պահի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին եւ պահպանի Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո այսօր եւ միշտ. ամեն»,— ասաց Հայոց Հայրապետը:

Ի պատիվ արարողության մասնակիցների՝ տեղի ունեցավ նաեւ ընդունելություն, որի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը, եւս մեկ անգամ ներկաներին բարի գալուստ մաղթելով համայն հայության հոգեւոր կենտրոն, անդրադարձավ ազգային ինքնության եւ նկարագրի կերտման գործում ուսուցչի կարեւոր առաքելությանը՝ մաղթելով բեղուն եւ արգասաբեր ուսումնական նոր տարի:

Հրավիրյալներն առիթ ունեցան նաեւ շրջելու Մայր Աթոռի թանգարաններում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Լուսավորչահիմն Մայր Աթոռի 125-րդ գահակալը

Նվիրվում է Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակին

Գործ՝ Վ. Սուրենյանցի

Սկիզբը՝ թիվ 15—16

Մկրտիչ Խրիմյանը հայ մշակույթի երեւելի ներկայացուցիչներից է, բարձրաստիճան հոգեւորական, հրապարակախոս, հասարակական ու քաղաքական գործիչ, լուսավորիչ, 19-րդ դարի երկրորդ կեսի մեծ մանկավարժ ու կրթական գործի հմուտ կազմակերպիչ:

1907 թ. նոյեմբերի 15-ին ֆրանսիական «Մերքյուր դը Ֆրանս» պարբերականում տպագրված մահախոսականում Արշակ Չոպանյանը հույս է հայտնում, որ «Խրիմեանի կեանքն ու տիպարը ստուար հատորի մը նիւթ կրնան կազմել, եւ այդ հատորը օր մը պիտի գրուի անշուշտ եւ պիտի ամփոփէ ամենայն մանրամասնութեամբ՝ այդ եզական դէմքին բոլոր գծերը... »: Ա. Չոպանյանի այդ փափագը փայլուն իրագործեց պատմական գիտությունների դոկտոր Է. Կոստանդյանը՝ հրատարակելով «Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը» (Երեւան, 2000, 448 էջ) մենագրությունը:

Հայոց Հայրիկի մասին շատ է խոսվել ու գրվել, նրա բովանդակալից եւ փոթորկահույզ կյանքի ու գործի, մարդկային կերպարի մասին հյուսվել են երգեր ու լեգենդներ, գրվել են հուշագրություններ ու պատումներ, կատակներ ու սրամտություններ: Ամենայն Հայոց Հայրիկն ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի համար այն անզուգական մտերիմներից էր, որին բանաստեղծը նվիրել է գեղարվեստական չորս ստեղծագործություն՝ երկու բանաստեղծություն՝ «Հայ ուխտավորին» եւ «Կաղնի», ինչպես նաեւ երկու արձակ երկ, որոնք տպագրվել են Խրիմյանի մահվան առիթով՝ «Երկու հայր» եւ «Խրիմյան Հայրիկի օրերից մինը»: Մեծն Կոմիտասի շնորհիվ մեզ է հասել Խրիմյանի եւ գերմանացի հնախույզի միջեւ զրույց-մանրապատումը: Սկյուտարի սոխակ Պ. Դուրյանը Խրիմյանին է նվիրել «Հայրիկն հայոց» (1869 թ.), «Ի պատրիարքական ընտրութիւն ամեն. Հայրիկին» (1869 թ.) եւ «Ի դիմաւորութեան ամեն. Հայրիկին» (1869 թ.) բանաստեղծությունները, Ռաֆֆին՝ «Նվեր «Վասպուրական Արծվույն»» (1857 թ.) եւ «Մշակ (Նվեր Խրիմյան Հայրիկին)» բանաստեղծությունները, Սիամանթոն՝ «Խրիմյան Հայրիկ. Ռուսահայաստանի նահատակներու հիշատակին» բանաստեղծությունը, Ավ. Իսահակյանը՝ «Խրիմյան Հայրիկ» հուշապատումը: Ալ. Շիրվանզադեն եւ Գ. Մահարին եւս ուշագրավ հիշողություններ ունեն Խրիմյան Հայրիկի մասին: «Անահիտ» ամսագրի հոկտեմբեր—նոյեմբեր—դեկտեմբեր միացյալ համարում Արշակ Չոպանյանը, իր հիացմունքն արտահայտելով Հայոց Հայրիկի վերաբերյալ, հրապարակել է «Հայրիկի մահվան առիթով» վերտառությամբ հոդվածը, որի արձագանքները լույս տեսան էջմիածնի «Արարատ» ամսագրում: 1907 թ. առաջին ամիսներին հրատարակված «Դեմքեր» շարքում Չոպանյանը զետեղել էր «Ժամանակակից Հայաստանի առաքյալը. Ն. Վ. Մկրտիչ Խրիմյան» հոդվածը: Այդ հրապարակմանն արձագանքել է Արփիար Արփիարյանը՝ «Հայրիկը եւ Մխիթարյանները» հոդվածով: «Իմ տեսակցությունը Խրիմյան Հայրիկի հետ» (1892 թ.) վերտառությամբ հոդված է հրապարակել Ղ. Աղայանը:

Խրիմյան Հայրիկին նվիրված գեղարվեստական վերջին գործերից է ամերիկահայ մտավորական, գրող, թատերագիր, բեմադրիչ, թարգմանիչ ու բանաստեղծ Հրանտ Մարգարյանի հեղինակած եւ 2017 թվականից տարբեր բեմերում ներկայացված «Խրիմյան Հայրիկ» մոնոներկայացումը, որում հեղինակը հանդես է գալիս կաթողիկոսի դերում՝ ներկայացնելով Հայրիկի կյանքը:

Հայոց պաշտելի Հայրիկին են նվիրված «Խրիմյան Հայրիկ» («Եկել է գարուն, սոխակը սիրուն, Վարդի թփի տակ, Հայրիկ ջան, Երգէ հայրենիք...»), «Հայրիկի քարոզները» («Հայրիկը ծերացել էր ազգին համար ցավելով, Ազատություն կգոչեր՝ սեր, միություն ցանելով»), «Հայրիկ, հայրիկ» («Հայրի՛կ, Հայրի՛կ, քո հայրենիք՝ Վասպուրական մեր աշխարհ...») երգերը:

Կերպարվեստում Խրիմյանի կերպարին են ադրադարձել եւ արվեստի արժեքավոր գործեր են ստեղծել Հ. Այվազովսկին («Մկրտիչ Խրիմյանը էջմիածնի շրջակայքում», 1885 թ.), Վ. Սուրենյանցը (Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի դիմանկարը, 1906 թ.), Փ. Թերլեմեզյանը (Խրիմյանը ժողովրդի մեջ, էսքիզ), Հ. Հակոբյանը (Մկրտիչ Ա (Խրիմյան) կաթողիկոսի դիմանկարը, 1900—1910 թթ.), Ե. Թադեւոսյանը (Խրիմյան Հայրիկը, 1900 թ.), Ա. Տեր-Մարուքյանը (Խրիմյան Հայրիկի դիմաքանդակը, 1907 թ., բրոնզ): 2007 թ. նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի բարձր հանդիսապետությամբ, Մկրտիչ Ա Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 100-ամյակի առիթով տեղի է ունեցել Խրիմյան Հայրիկի կիսանդրիի բացման հանդիսավոր արարողություն:

2020 թ. Հայաստանի Կենտրոնական բանկը թողարկել է արծաթե հուշադրամ՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու ծննդյան 200-ամյակին (էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան):

Խրիմյան Հայրիկի հիշատակի հավերժացումն է Մայր Աթոռի «Երկաթե շերեփ» հուշաղբյուրը (ճարտարապետ՝ Արեգ Իսրայելյան, քանդակագործ՝ Գ. Բաղդասարյան): Այն կառուցվել է 1982 թ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ վանեցի Միհրան եւ Սեդա Բուխանյանների:

Ուշագրավ է Խրիմյան Հայրիկի հիշատակին կանգնեցված մեկ այլ հուշակոթող: Տաթեւի վանքից Հալիձոր տանող ճանապարհին կանգնեցված հսկա քարը կոչվում է «Հայրիկի քար»: Հալիձորցիները պատմում են, որ Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Տաթեւից Հալիձոր գնալիս նստել է այդ վայրում, հանգստացել, հիացել շրջակայքի աննկարագրելի գեղեցկությամբ, ապա շարունակել ճանապարհը: Հետագայում, ի հիշատակ Հայոց Հայրիկի, զանգեզուրցիները նույն այդ վայրում մի մեծ քար են կանգնեցրել ու այդպիսով հավերժացրել սիրելի կաթողիկոսի նկատմամբ ունեցած իրենց սերն ու ակնածանքը:

Խրիմյան Հայրիկի պատվին փողոցներ են անվանակոչվել Երեւանում, Գյումրիում, Էջմիածնում եւ այլ բնակավայրերում, դպրոցներ՝ Երեւանում (թիվ 10), Գյումրիում (թիվ 41), Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղում:

ԵՐԿՈՒ ՀԱՅՐ

1896-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջն էր եւ Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը:

— Հայրիկի աջը կուզեմ համբուրել,— խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին:

— Բարով, տեր հայր,— աջը մեկնեց Հայրիկը. քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

— Որտեղի՞ց կուգաս:

— Սասունի կողմերեն. ես Ա.-ի տեր Սարգիսն եմ...

— Ա.-ի տեր Սարգիսը...

— Այո՛, Հայրիկ:

— Է՞...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրի՛կ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին, մնացի այսպես...

— Է՞, հիմի՞...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրի՛կ, ես... այնպես, եկել եմ... եկել եմ... Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջեւ կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում: Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս,— գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

— Ամենքը միասին՝ քսան, Հայրի՛կ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,— պատասխանեց Հայրիկը,— այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՞ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

— Հայրիկինը...

— Դե, ելա՛, տեր Սարգիս, մո՛ռ եկ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ, ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին...

Նրա առջեւ խոնարհած էր հայոց Հայրիկը...

Հովհաննես Թումանյան, 1907 թ.

ԹԱՆԿԱԳԻՆ ՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանացի մի հնախույզ հետաքրքրվում է հնագիտական արժեք ունեցող իրերով: Երբ էջմիածնում նրան ներկայացնում են Խրիմյանին, վերջինս դիմում է թարգմանչին:

— Ասեք, որ ես թանկագին հնություն մը ունիմ. քանի՞ տարվան կենթադրե:

— Հինգերորդ դարի,— փորձում է գուշակել հնագետը:

— Անկեց ալ հին,— հուշում է կաթողիկոսը:

— Քրիստոսի ժամանակվա:

— Անկեց ալ հին:

Հնախույզի աչքերը վառվում են հետաքրքրությունից, որ աստիճանաբար փոխվում է ոգեւորության.

— Տեսնեմ, Վեհափա՛ռ, ինչ է այդ թանկագին հնությունը:

— Իմ ազգս է,— կշտամբող շեշտով պատասխանում է Խրիմյան Հայրիկը,— Քրիստոսեն ալ հին, Մովսեսեն ալ. իմ թշվառ ազգը: Անտեսած այս թանկագին հնությունը՝ հին քար մը կամ առարկա մը փնտրելու կելլեք:

Ըստ Կոմիտասի

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ

Սեպտեմբերի մեջ, 1901 թվին, այցելեցի Ս. Էջմիածին: Նույն թվի մայիսին, երբ Վենետիկ էի, մեզ ամենիս սիրելի Հայր Ղեւոնդ Ալիշանը իմ վրա քաղցր պարտք դրեց «Հայոց Հայրիկին կարոտագինս ողջունելու իմ կողմանե»:

Մի երեկո անմոռանալի բախտ ունեցա Հայրիկի մոտ լինելու եւ համբուրելու նրա Աջը:

Սիրտս ուժգին խփում էր հուզմունքից եւ ուրախությունից:

Առաջարկեց նստել:

— Վեհափա՛ռ Հայրիկ,— ասացի ես,— մեծ բախտավորություն եմ զգում, որ ինձ վիճակվել է բերել Նահապետ Ալիշանի կարոտագին ողջույնները Հայոց Հայրիկին:

— Ա՜հ, շատ շնորհակալ եմ: Դուն Վենետի՞կ էիր, ե՞րբ էիր հոն, ի՞նչպես է Հայր Ղեւոնդը, աղե՞կ է:

— Այո՛, Վեհափա՛ռ Հայրիկ, այս գարնանը Վենետիկ էի եւ պատիվ ունեցա մի քանի անգամ լինելու ալեզարդ Նահապետի մոտ: Նա հիվանդոտ է եւ թույլ...

— Ափսո՛ս, ափսո՛ս,— խոսքս ընդհատեց Հայրիկը,— մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ գրիչ ունի. Նա շատ է ազդեր իմ գրչի վրա, նա ինձ շատ բան է ներշնչեր: Ասա՛, ուրիշ ի՞նչ կըներ:

— Նա ինքն էլ էր ասում, որ Հայրիկը իրենից հարյուր օր, միայն հարյուր օր մեծ է, եւ ասում էր, թե բերկրանքով եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում եւ ժողովրդին այցի է ելնում... Միշտ նախանձում էր Ձեզ, Վեհափա՛ռ Հայրիկ, եւ ասում էր, թե Հայրիկի բանն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետեւ Մասիսի շուքին ներքո է քնում, հայոց դաշտերի ծաղկանուշ հովն է ծծում, Արաքսի ջուրը խմում:

Այստեղ Հայրիկը ուրախ եւ սրտանց ծիծաղեց:

Շարունակությունը՝ էջ 5

ՑՆՈՐԿՆ ՏԵՐՅԱՆԸ

Տերյանի ծննդյան 135-ամյակի եւ մահվան 100-րդ տարելիցի առիթով

Սկիզբը՝ թիվ 2—16

ԺԲ. Տերյան եւ Չարենց

Տերյան—Չարենց կապի մասին երկար կարելի է խոսել: Տերյանը նկատել է Չարենցին եւ առանձնացրել ժամանակի գրական հորձանքի մեջ: Չարենցը Թիֆլիսի «Մի բաժակ թեյ» սրճարանում տեսել է Տերյանին եւ դռան արանքից ակնածանքով երկար նայել նրան: Առաջին իսկ դրամական միջոցներով դպրոցական Չարենցը գնել է Տերյանի բանաստեղծությունների ժողովածուն: Ստեղծագործել է նրա բարերար ազդեցությամբ: Ինքն իսկ իր ստեղծագործության առաջին շրջանը համարել է տերյանական: Հետո «Երեքի» դեկլարացիայով եւ այն կենսագործող գրքերով ընտրեց նոր խոսքի ճանապարհը, անգամ ժամանակի գրական բարքերի սովորույթով մի պահ ընդվզեց Տերյանի դեմ, բայց հետո «Վերադարձիր, օ, վերադարձիր» կանչեց, մեծարեց ու փառաբանեց, ապրեց նրա հետ իր մնացած գրական կյանքը: Ամենուր Տերյանն էր՝ խոսքի՛ մեջ, բանաստեղծությա՛ն մեջ, հրատարակչական ծրագրերի՛ մեջ: Գրական թանգարանից իր տուն տարավ Տերյանի անտիպները, սրբազան դողով արտագրեց դրանք, որպեսզի ամեն մի ձեռք տալիս՝ Տերյանի թղթերը չտրորվեն, օրագրային շատ թանկ գրառումներ արեց նրա մասին, ուզեց հրատարակել Տերյանի երկհատորյակը, բայց չհասցրեց: Արտագրածի ինքնագրերն անհայտացան, իսկ որպես Տերյանի ժառանգության վկայություններ՝ մնացին իր արտագրությունները: Չարենցն իր հերթին արեց Կապույտ աղջկա գովքը, հետո այդ աղջիկը նրա համար դարձավ Կարմիր ամազոնուհի: Չարենցն ապրեց տերյանական աշնան թախիծը, արցունքն աչքերին՝ «Տաղ անձնական» ու «Հեռացումի խոսքեր» հյուսեց: Բայց հետո, երբ օրերը քաղաքական բովանդակություն ստացան, եւ բացվեց երկրում մոլեգնող քաղաքական հողմաշունչ աշնան ցուրտ առավոտը, Տերյանի աշունը Չարենցի պատկերացումների մեջ դարձավ մահաշունչ ու կործանարար՝ «Վերադարձած աշուն», «Աշնան երգ», «Այս աշունը այնպես անցավ», «Աշունը, ա՜խ, այնպես անցավ», «Նույն երգն է կրկնում աշունը», «Ցո՛ւրտ է, աշո՛ւն է...», «Շաչում է այս աշնան քամին...»: Ահա եւ առանձին տողեր չարենցյան այդ շարքից.

Այս աշունը այնպես անցավ,
Այս աշունը մթին էր, ինչպես
Երազում զառանցած հանցանք...
***
Աշունը, ա՜խ, այնպես անցավ՝
Եվ ցնցող, եւ ծանր, ինչպես
Հանճարեղ ոճիր կամ հանցանք:
***
Շաչում է աշնան քամին, իբրեւ հին,
դասական Ակվիլոն.
Աշուն է, եւ ծանր անձրեւի արճիճե շեղջեր
քշելով,
Եվ ավերք, եւ նեռ գուժելով՝ թռչում է հողմն
Ակվիլոն:—

Ահա այսպես 1936 թվականի քաղաքական աշունը նրա համար դառնում է մայրամուտ եւ վերածվում մայրամուտի երգերի, որոնցում գլխավոր բառը Մահն է: Իսկ Ակվիլոնը հյուսիսային սառը քամին է, այն հյուսիսի, որտեղից ընդամենը մի քանի տարի առաջ հեղափոխության տաք գոլորշին էր բարձրանում:

Պահպանելով իր հուժկու գրական անհատականությունը՝ Չարենցը կարող էր միաժամանակ վերափոխվել ու դառնալ Խաչատուր Աբովյան («Դեպի լյառը Մասիս»), կարող էր դառնալ Կոմիտաս («Կոմիտասի հիշատակին», «Կոմիտաս»), կարող էր դառնալ Աղասի Խանջյան («Դոֆինը նայիրական» հնչյակների շարքը), կարող էր դառնալ նաեւ Տերյան: Ահավասիկ 1937-ին գրած երկու բանաստեղծության առաջին տները.

Մի՛շտ, երբ կարդում եմ Տերյանը,— Ղարսն է
հիշում իմ հոգին:
Իմ մանկությունն ու այգին հին,— իմ
հայրենիքն ու նայիրյանը...
Լաց է լինում մեղմ, հոգին իմ,— դարձն է
տոնում մորմոքի,—
Ղարսն եմ հիշում հեռավոր,—
միշտ, երբ կարդում եմ Տերյանը...
***
Մ՛ախ, կարծես նստած ես դռանը եւ
ինձ հետ Տերյան ես կարդում...
Շարքն ես կարդում նայիրյան՝
նայիրյան խոսքերի գանձարանը...
Օ՜, սիրում էինք մենք նրան, ինչպես
հույսն են սիրում ապարդյուն,—
Եվ... Տերյան էիր դու կարդում՝ միշտ
հետս նստած մեր դռանը:

Դեռ ավելին. լինելով հետտերյանական պոեզիայի առաջնորդը, կռելով, կոփելով, դաժանագույն ու մահացու գրապայքարի մեջ բացելով նոր արվեստի ճանապարհը՝ Չարենցի աչքի առաջ միշտ Տերյանի օրինակն էր՝ որպես գրական չափանիշ: Ահա այդ «Անվերնագիր» (1933) պատառիկը.

...Մենք Տերյանից սովորեցինք
Երգել երգեր անորոշ,
Մեր քնարը նվիրեցինք
Մշուշների ու սիրո,—
Եվ երբ եկան որոշ օրեր,
Որոշ գործեր եկան երբ,—
Անվարժ հնչեց քնարը մեր
Եվ մնացինք առանց երգ...

Ուսուցիչը չկա այլեւս,— ասում էր Չարենցը, եւ դա այն դեպքում, երբ նոր ժամանակների Ուսուցի՛չն էլ էր ինքը, Ուսուցչապե՛տն էլ, Սերմնացա՛ուն էլ, Հնձվո՛րն էլ, Առաջնո՛րդն ու Նահատա՛կն էլ...

Կարելի է է՛լ ավելի խորացնել նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը, բայց առանց հակադրելու, որովհետեւ նրանց երկուսին էլ հավիտենական կյանք է սպասում հայ ժողովրդի գիտակցության մեջ: Չարենցը դարի շարժումի մեջ էր՝ իր ժամանակի քաղաքական մեծ տեղաշարժերի խոր զգացողությամբ: Այստեղ ոչ միայն ԽՍՀՄ-ում ծավալված քաղաքական բռնություններն էին, այլեւ իսպանական դեպքերը, գերմանական ֆաշիզմը:

Այս առումով Չարենցը Տերյանի շարունակությունն էր նաեւ եվրոպական արվեստի նոր զարգացումների տեսադաշտում: Ֆրանցիսկո Գոյան (1746—1828) նկարչության մեջ հեռացավ առարկայական նմանություններից եւ բարդացրեց գեղանկարը: Սեւ իրականություն՝ պատերազմի սարսափներ, իրականության անբարոյականացում, եւ այս ամենը՝ գույների լեզվով: Այսպես՝ մինչեւ Մալեւիչի հանրահայտ «Սեւ քառակուսի»-ն:

Չարենցը եւս դիմեց բարդացումների եւ գույների խտացման: Անգամ ոգեկոչեց միջնադարյան նկարիչ Հիերոնիմ Բոսխին (1450/1466—1516)՝ ակնհայտորեն է՛լ ավելի խորացնելով իրականության աններդաշնակության պատկերումը: Չարենցն ստեղծեց հայոց Գերնիկան՝ ցեղասպանության համապատկերը («Դանթեական առասպել», 1915—1916, «Մահվան տեսիլ», 1920, 1933):



Շարունակությունը՝ էջ 7, 8

Լուսավորչահիմն Մայր Աթոռի 125-րդ գահակալը

Սկիզբը՝ էջ 4

— Ան կնախանձի ինձ, եւս վաղը կարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասխի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն եւ փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչեւ հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ):

— Էհ, դուն ալ բարով ես եկել: Ես Կովկասի մեջ երկու բանաստեղծ կճանչնամ ու շատ կսիրեմ անոնց, մեկը մեր ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհաննես Թումանյանն է, իշտե, մեկն ալ դուն ես, քեզ ալ հիմա տեսա: Դուն անոնցմե երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կերգես...

Այստեղ Հայրիկը նորից շատ զվարթ ու բարձր ծիծաղեց:

— Շա՞տ պիտի մնաս հոս,— հարցրեց նա:

— Մի քանի օր ուզում եմ մնալ, Վեհափառ Հայրիկ:

— Էհ, լավ է, ամեն երեկո եկ, կխոսինք:

Գլուխ խոնարհեցի ու դուրս ելա:

Ամբողջ գիշերը ես նրա թովիչ ձայնի, նրա արծվենի հայացքի ազդեցության տակ էի: Ինձ թվում էր, որ ապրում եմ նահապետական օրերում եւ երջանկություն եմ ունեցել խոսելու հին նահապետներից մեկի հետ: Հայրիկն իմ երեւակայության մեջ միշտ պատմական կամ, ավելի ճիշտ ասած, առասպելական լուսապսակով էր զարդարված: Մանուկ օրերից երազել էի տեսնել Վասպուրականի Արծվին, հայ ժողովրդի հույսերի եւ տենչերի կրող Հայոց Հայրիկին:

Մյուս երեկո Հայրիկը իր քարտուղար Վարդապետի միջոցով ինձ կանչեց Վեհարան:

— Էհ, նստե, տեսնենք, դուն գիտես, որ ես ալ բանաստեղծ եմ ու շատ կսիրեմ բանաստեղծություններ կարդալ: Հոմերոսն ու Վիրգիլիոս ամենեն շատ կսիրեմ:

Ու սկսեց առույգ շեշտով անգիր արտասանել Իլիականից եւ Էնեականից գրաբար հատվածներ: Այդ պահին նրա գեղեցիկ աչքերը փայլում էին երիտասարդական ոգեւորությամբ:

Երազի մեջ էի զգում ինձ, այնպես իրականությունն ինձ անիրական էր թվում:

— Քեզի իմ գրքերեն տամ, հարկավ կարդացած կըլլաս, սակայն բանաստեղծները իրար կնվիրեն իրենց հեղինակություններեն. դուն ալ քուկիններեն ինձ կուտաս:

Եվ Հայրիկը կանգնեց իր պարթեւական հասակով, գնաց մյուս սենյակը եւ բերեց «Ժամանակ եւ խորհուրդ յուր» եւ «Պապիկ եւ Թոռնիկ» գրքերը:

— Ասոնք քեզի Հայրիկեն հիշատակ:

Անհուն շնորհակալությամբ առա թանկագին նվերները՝ մարմարյա Աջը համբուրելով:

Այնուհետեւ նա թիկն տվեց բարձերին ծալապատիկ նստելով: Շինում էր հաստ-հաստ պապիրոսներ եւ իրար հետեւից ծխում: Ծխելով խոսում էր անվերջ, պատմելով Վանի կյանքից, իր մանկությունից, չարաճճիություններից: Պատմում էր զանազան դեպքեր մեր մոտիկ անցյալից, նկարագրում էր իր ուղեւորությունները: Ես հիացած ականջ էի դնում նրան, այնքան պերճախոս էր եւ յուրահատուկ պատմող: Նրա խոսքը համեմված էր ժողովրդական դարձվածքներով ու առածներով:

Հիշելով զվարթ դրվագներ իր կյանքից, ուրախ ծիծաղում էր. այնպես հուժկու թափով էր ծիծաղում, որ բազմոցը տակին խաղում էր:

Առհասարակ Հայրիկը շատ էր սիրում խոսել-զրուցել: Հարց էր տալիս եւ պատասխանի չսպասած՝ ինքը շարունակում էր խոսել, պատմել եւ ծիծաղել:

Վանքում մնացի մի քանի օր եւս, ու գրեթե ամեն երեկո Հայրիկն արժանացնում էր ինձ իր տեսակցությանը: Եվ երբ մի երեկո մնաք բարեւի գնացի եւ հայտնեցի, որ առավոտյան մեկնում եմ Էջմիածնից, նա ասաց.

— Տղա՛ս, ամեն անգամ, երբ գաս հոս, Հայրիկին չմոռնաս տեսնել:

Ավետիք Իսահակյան, «ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ»,
Հայպետհրատ, Եր., 1946 թ.

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ

Երեւանի դեսական համալսարանի մասնակցությունը Հայրենական մեծ դատերազմի տարիներին ռազմահայրենասիրական, զորահավաքային եւ թիկունքային աշխատանքներին

Սկիզբը՝ թիվ 16

Պատերազմը լուրջ փոփոխություններ առաջացրեց համալսարանի ներքին կյանքում, աշխատանքները վերակառուցվեցին պատերազմական ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Այդ ժամանակահատվածում ժողովրդական տնտեսության համար պետք էին բարձրագույն կրթությամբ այնպիսի կադրեր, որոնք հարկ եղած դեպքում կարող էին դառնալ սպաներ ու զինվորներ, ռազմական գործի լավագույն կազմակերպիչներ:

1941 թ. ամռան երկու ամիսների ընթացքում համալսարանի ռեկտորատը եւ կուսակցական կոմիտեն, վերադաս օրգանների ցուցումների համաձայն, վերանայեցին ուսումնական ծրագրերն ու դասաժամերը, ավելացրին ռազմագիտության ուսուցման ժամերը: Համալսարանի ծավալով մշակվեց կոլեկտիվի անդամների ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների ծրագիր:

Այդ տարի համալսարանի ուսանողներն ու դասախոսները սովորականից 10 օր շուտ վերադարձան ամառային արձակուրդներից: Նրանցից ամեն մեկը զեկույց ներկայացրեց ռեկտորատին, կուսակցական եւ ԼԿԵՄ կոմիտեներին՝ բերքահավաքի ժամանակ կոլտնտեսություններում ու սովխոզներում կատարած աշխատանքի մասին: Ֆիզիկամաթեմատիկական եւ պատմության ֆակուլտետների մի քանի ուսանողներ իրենց զեկույցները համալսարան ուղարկեցին Ղարաբաղից՝ կամավոր հիմունքներով բանակ մեկնելուց առաջ: Նամակներից մեկում, որը հասցեագրված էր կուսակցական եւ ԼԿԵՄ կոմիտեներին, ասված էր. «Սիրելի՛ ընկերներ, մենք սիրով կատարեցինք ձեր հանձնարարությունը, ամառային գրեթե բոլոր օրերին մասնակցեցինք դաշտային աշխատանքներին, փոխարինեցինք ռազմաճակատ մեկնած կոլտնտեսականներին եւ առատ բերք հավաքեցինք: Երբ մոտենում էր համալսարան վերադառնալու օրը, ականատես եղանք, թե ինչպես մեր շրջանի երիտասարդները մեկնեցին կարմիր բանակ: Մենք նույնպես որոշեցինք մեկնել նրանց հետ հայրենի օջախից, իսկ զեկույցները՝ փոստով ուղարկել ձեզ: Կարծում ենք, որ բախտ կվիճակվի մեզ հաղթանակից հետո վերադառնալ սիրելի համալսարան եւ գրկախառնվել ձեզ հետ» (***Փ. Ենգոյան,*** *Երեւանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 13*):

Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեն նման երկու նամակ ստացավ Ախալքալաքի Բոգդանովկայի շրջանից: Դրանք գրել էին համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող Վահրամ Սարգսյանը եւ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող Հրաչիկ Զաքարյանը: Վահրամ Սարգսյանի նամակում ասված էր. «Մեր գյուղում դաշտային աշխատանքները հիմնականում ավարտվեցին: Համոզված եմ, որ իմ կողմից կատարած աշխատանքը գոհացրել է կոլտնտեսության ղեկավարությանը: Այդ մասին նրանք կգրեն ձեզ: Երբ մոտենում էր համալսարան վերադառնալու օրը, ես նույնպես որոշեցի մեկնել բանակ իմ մանկական ընկերների հետ: Որոշումս թաքցրի ծնողներիցս եւ խնդրեցի զինկոմին գյուղի ընկերների հետ միասին բանակ ուղարկել նաեւ ինձ: Նա սկզբից մերժեց, բայց երբ համոզվեց, որ ես պնդում եմ իմ խնդրանքը, համաձայնեց, եւ ես մեկնեցի: Նամակս գրում եմ ճանապարհից, մնաք բարով, համբուրում եմ բոլորիդ, իմ սիրելի ընկերներ եւ ուսուցիչներ» (*նույն տեղում*):

Վ. Սարգսյանի՝ բանակ մեկնելուց մեկ շաբաթ անց համալսարանի ԼԿԵՄ կոմիտեն Բոգդանովկայի շրջանի գյուղբաժնից մի շնորհակալագիր ստացավ նրա ցուցաբերած հայրենասիրության համար: Վերոհիշյալ բոլոր նամակները հրապարակվեցին համալսարանի ընդհանուր ժողովում, որը հրավիրվել էր այդ նպատակով:

1941 թ. օգոստոսի վերջին համալսարանի ուսումնական շենքն ու հանրակացարանները նորից լեփ-լեցուն էին ուսանողներով ու դասախոսներով: Օգոստոսի 30-ին համալսարանում ուսանողության եւ դասախոսական կազմի ժողով տեղի ունեցավ: Ժողովում զեկուցումով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանը: Նա իր զեկուցման մեջ շարադրեց նոր ուսումնական տարում համալսարանի ռեկտորատի, կուսակցական ու հասարակական կազմակերպությունների եւ դասախոսական կազմի անելիքները, ուսումնադաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները եւ կադրերի պատրաստման գործում պատերազմական ժամանակաշրջանում առաջադրվող նոր խնդիրները: Ժողովում տրված զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակություն: Ելույթ ունեցող ուսանողները պարտավորվեցին սովորել բարձր առաջադիմությամբ, միաժամանակ ակտիվորեն մասնակցել համալսարանում ու մայրաքաղաքում կազմակերպվող ռազմապաշտպանական միջոցառումներին, տիրապետել ժամանակակից ռազմական գիտության նվաճումներին: Դասախոսներն իրենց պարտքը համարեցին ուժեղացնել ռազմահայրենասիրական, գաղափարական-դաստիարակչական աշխատանքը՝ ուսանող երիտասարդության մեջ արմատավորելով թշնամուն հաղթելու կամք ու համոզվածություն: Ժողովի ընդունած որոշման մեջ ընդգծվեց, որ կոլեկտիվը մինչեւ վերջ կկատարի կուսակցության ու կառավարության առաջադրանքները:

Ժողովի վերջում ձայն խնդրեց ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանը: Բոլորը ճանաչում էին նրան որպես կրակոտ ու անսպառ եռանդի տեր երիտասարդի: Ամբիոնից նա հրապարակեց համալսարանից ռազմաճակատ մեկնած իր ընկերների նամակները՝ ուղղված ողջ ուսանողությանն ու դասախոսական կազմին:

Շարունակությունը՝ էջ 7

ՎԻԿՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՆԱՆԵ՛, ՆԱՆԵ՛, ԿՐԱ՛Կ ՏՈՒՐ ԻՆՁ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

2019 թվականին Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարանի (գյուղ Հեշտիա, Նինոծմինդայի շրջան, Վրաստան) եւ ՀԱԵ Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնի նախաձեռնությամբ լույս տեսավ 20-րդ դարի վերջի վիրահայ բանաստեղծ, արձակագիր Վիկտոր Հովսեփյանի «Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ» մանկական ժողովածուն, որն ամփոփում է հեղինակի տպագրված եւ անտիպ մանկական բանաստեղծությունները, հեքիաթները: Այն հեղինակի՝ հետմահու տպագրված 7-րդ գիրքն է: Գրքի խմբագիրը ՎՀԳ «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանն է: Գրքում տեղ են գտել 1986 թվականին լույս տեսած «Չալ գոմեշի հեքիաթը» («Արեւիկ» հրատարակչություն, Երեւան), 1996 թվականին լույս տեսած «Ձուկն ու երիցուկը» («Մերանի» հրատարակչություն, Թբիլիսի) մանկական ժողովածուներում եւ մամուլում տարբեր տարիների տպագրված ստեղծագործությունները, ինչպես նաեւ որոշ անտիպ գործեր:

Վիկտոր Հովսեփյանը նաեւ նկարիչ էր. բանաստեղծ-նկարիչ եւ նկարիչ-բանաստեղծ: Գրքի նկարազարդումները եւս հեղինակինն են, որ մաս-մաս, կտոր-կտոր հավաքվել են գիրքը կազմողի կողմից (Գիսանե Հովսեփյան) եւ ձեւավորել ժողովածուն: Գիրքը, իրավամբ, վերջին շրջանի հայ մանկական գրականության լավագույն էջերից մեկը կարելի է համարել:

* * *

«Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ» ժողովածուն երկու մասից է կազմված: Երկու մասերում էլ, իբրեւ քնարական գլխավոր հերոսների, հանդիպում ենք նանեների. առաջինը հեղինակի տատն է՝ Խազո մեծ նանեն, երկրորդը՝ հեղինակի դուստրը՝ փոքրիկ Նանեն: Գրքի առաջին մասը կրում է «Ասի՝ Նանե՛...» խորագիրը: Այստեղ ամփոփված բանաստեղծությունների թեման հիմնականում վերցված է մանուկների առօրյայից: Այս բաժնի հերոսները՝ Գագոն, ամպիկը, քրիզանթեմ-ծաղիկը, մայրիկը, թիթեռնիկը, Սահակը, առուն եւ այլն, բոլոր մարդկանց ծանոթ են մանկությունից: Կա՞ մի երեխա, որ չի ուզում՝ տատն իրեն գովի: Չկա՛: Գագոն՝ այդ երեխաներից մեկը՝ մեզանից մեկը, աստղանավորդ դառնալու երազանքի թեւին, տատին գայթակղում է հեռավոր աստղիկների փայլով, այդ աստղիկներից մեկը տատի մատանուն քար դնելու ու ծիածանի մի պատառից էլ գլխաշոր անելու խոստմամբ, միայն թե տատն իրեն գովի: Գագոյի անզիջում տատը, մեր՝ բոլորիս տատիկների պես, հավանում է Գագոյի մտքերը, այդ մտքերի թովքը, բայց մինչեւ աչքով չտեսնի աստղանավորդ դարձած թոռանը, չի գովի նրան («Գովեստ»): Կա՞ մի պապ, որ օրհնած չլինի թոռանը: Պապի օրհնությունը... Ընտանիքի հոր, գերդաստանի արական սեռի ավագ ներկայացուցչի օրհնանքն ու անեծքն այսօր էլ բանաստեղծի ծննդավայր Վրաստանի բիբլիական Ջավախք աշխարհում անսասան են, ինչպես հնագույն առասպելներում: «Պապս» բանաստեղծությունն ավարտվում է «Աստված ձեզ տա սիրած գործ» օրհնությամբ, որ թանկ է երկնքից իջած երեք խնձորից անգամ:

«Ասի՝ Նանե՛...» բաժնում բերված բանաստեղծությունները կարելի է դասակարգել ըստ ժանրերի, որոնցում բավական հետաքրքիր են բանահյուսական կտորների հովսեփյանական մեկնաբանումները: Գրքի այս մասում տեղ են գտել ժողովրդական բացուխուփի խաղերը, մանկական խաղիկները, հավատալիքները: Այսպես՝ «Երեքնուկը» հեղինակի ծննդավայրում առ այսօր պահպանվող վիճակի խաղ է, երբ երեխաները երեքնուկի թերթիկների վրա իրենց երազանքներն են դնում ու երեք թերթիկներից մեկի հետ քաշում իրենց վիճակված բախտը: «Խատուտիկ ծաղիկը» մանկական կենցաղային խաղերից մեկն է. որպեսզի խատուտիկի ցողունը նվագի, երեխան այն փչելուց առաջ մոգական խոսքեր պիտի ասի. «Թոնիր թալեմ պտպտաս, ելնես երդիկ՝ ճթճթաս...»:

«Հափիշտն ու ճիշտը» բանաստեղծությունը մանկական կենցաղից է վերցված: Լացող երեխայի ձայնը կտրելու լավագույն միջոցը նրան անսպասելի հարցով հետաքրքրելն է: Սա տարածված մեթոդ է. երբ երեխան լալիս է, ավագները նրան անակնկալի բերող հարց են առաջադրում, օրինակ՝ չորս իշուկները քանի՞ ականջ ունեն: Փոքրիկը լացը մոռացած անցնում է չորս իշուկի ականջները հաշվելուն... Մանուկների կենցաղից է «Կաչաղակը» բանաստեղծությունը: «Չ» տառի կրկնությամբ ստերը շարան արած «կաչաղակին» շատերս ճանաչում ենք մեր ընկերների շարքում ու այս բանաստեղծությամբ սովորում սուտասանին ճիշտն ասել տալու ձեւը:



Գրքի այս մասում կարմիր գծի պես անցնում է հովսեփյանական «ցոլքի» փիլիսոփայությունը, որ բանաստեղծությունները ժամանակային սահմանափակումներից՝ մանկական, ոչ մանկական, տեղափոխում է դիցաբանական մի անդորր միջավայր, ուր չկան անցյալ ու ապառնի, ուր ներկան է մարդկության ուղեկիցը: Ցոլք... Հավերժական հանելուկ, որը վերծանելը չէ բանաստեղծի խնդիրը, այլ այն ներկայացնելը՝ իբրեւ բացարձակ հանելուկ: Այսպիսի հանելուկները չեն վերծանվում, եւ հենց կենաց խորհուրդն էլ այդ է: Մենք, թե՞ մեր ցոլքը: Այն, ինչ կա՞նք, թե՞ այն, ինչ երեւում ենք...

«Ձուկն ու երիցուկը», «Անանուխը» շնչավորված բնության գունագեղ պատկերներին զուգահեռ պատմում են ցոլք դարձած անանուխի, երիցուկի ու ցոլք չդարձած ձկան մասին:

Գրքի այս բաժնում տեղ գտած բանաստեղծություններն աչքի են ընկնում բնության կենդանի նկարագրով, բանաստեղծական տողերի մեղեդայնությամբ, որ մերթ հանգավորման վրա է կառուցվում, մերթ բանաստեղծական ոտքի, մերթ բաղաձայնների կամ ձայնավորների կրկնության վրա: Նշվածն օժանդակում է երեխաներին ոտանավորն ավելի հեշտորեն մտապահելու:

* * *

«Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ» գրքի երկրորդ՝ «Հեքիաթի ձիու հեքիաթը» բաժնում ներկայացված են հեքիաթի (նաեւ՝ զրույցի) ժանրին վերագրվող ստեղծագործությունները՝ իրենց ծանոթ ու անծանոթ հերոսներով, իրենց ծանոթ ու անծանոթ սյուժեներով, տեղ-տեղ խրատական ավարտով, տեղ-տեղ երկնքից ընկնող խնձորներով: Այս հեքիաթները հիմնականում Մուշից ու Կարինից Ջավախք հասած բանահյուսական կտորներ են, որոնց մեծ մասն այսօր էլ բանավոր ապրում է Վրաստանի գեղատեսիլ այս եզերքում: Մշեցի ու կարնեցի են եղել Վիկտոր Հովսեփյանի պապերը: Նրանք Ջավախք են տեղափոխվել 1829—1830-ական թվականներին: Ժողովրդական բանահյուսությունը Վիկտոր Հովսեփյանի ստեղծագործության ամենակենսունակ ակունքներից է, որը վառ դրսեւորվում է մանկական այս գրքում: Ավելին՝ բարձրագույնն ավարտելուց հետո Վիկտորը բանագիտության, մասնավորապես՝ բանահյուսության մեջ խորանալու ծրագրեր ուներ, եւ այս ուղղությամբ բավական ուշագրավ է նրա գրական արխիվը:

«Հեքիաթի ձիու հեքիաթը» բաժնում ներկայացված հեքիաթների ասացողը մեծ Նանեն է՝ Խազո տատը: Ժողովրդական զրույցների հիմքի վրա են կառուցված «Շուշանի հեքիաթը» (ինչպես է Շուշան անունով աղջիկը շուշան-ծաղիկ դարձել), «Լուսատտիկի հեքիաթը» (ինչպես եղավ, որ լուսատտիկը լույս տալ սկսեց), «Ծառերը» (ինչու ծառերը չեն նստում), «Ամպի հեքիաթը» (ինչու է անձրեւից առաջ ամպը «գոռում»), «Կատվի ու մկների հեքիաթը» (ինչու են կատվի աչքերը լույս տալիս), «Միջնեկ այծի հեքիաթը» (որտեղից է երկնքում հայտնվել յոթ լուսավոր աստղերով աստղաբույլը)...

Շարունակությունը՝ էջ 8

ՅՆՈՐԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ



Գործ՝ Ա. Բեքարյանի

Սկիզբը էջ՝ 5

Չարենցը տեսավ, թե ինչպես է միջնադարն արշավում Իսպանիայի վրա, ինչպես է ֆաշիզմը նյութում ապագա ցեղասպանությունը, ուզում եմ ասել, որ Չարենցն իր ժամանակը տեսավ նաեւ Պիկասոյի (1881—1973) աչքերով: Ահա 1936-ին գրած իսպանական շարքից երկու դրվագ.

Կրկին, կրկին Իսպանիա, քո դաշտերի վրա
Արյան անձրեւ, արձիճ է կաթում —
Եվ հին քաղաքներիդ փողոցներում ահա
Խարույկներ են կրկին ճարճատում:
***
Արշավում է եւ քո, եւ աշխարհի վրա՝
Վարձկան ոհմակների գլուխն անցած՝
Հագած զարմանալի զրահ՝
Քո միջնադարյան անցյալը...
Իր հանճարով այսօր հնարել է մարդը
Այնպիսի մեքենաներ, զենքեր անխոս,
Որ չէր հնարի ոչ մի Լեոնարդո,
Որ չէր նկարի ոչ մի Բոսխ...

Գետնից ղեկավարվող սավառնակի առջեւ,
Այդ ռմբակիր ցինի — առջեւ չնչին
Խաղալիք է թվում այն ամենը, ինչ
Հնարել է մի օր Դա-Վինչին...

Գերնիկան քաղաք էր Բասկոնիայում, ուներ 7000 բնակիչ, դեմ էր գեներալ Ֆրանկոյի բռնապետությանը, որը 1937-ին 5000 ռումբ է նետում քաղաքի վրա: Բնակչության կեսը կամ զոհվում է, կամ վիրավորվում: Պիկասոն ստեղծում է «Գերնիկա» նկարը, որ համակ մղձավանջ է, ուր կան եւ ցլամարտի տեսարան՝ սպանությամբ, եւ մարդկային մահ, եւ համատարած ողբերգություն: Իսկ Չարենցն իր «Գերնիկան» տարբեր վերնագրերով արդեն ստեղծել էր:

ԺԳ. «Վերադարձիր, օ, վերադարձիր»

Առարկությունը գործող մի ընդհանուր սխալ մտայնության դեմ է, ինչը պիտի համատեղ ուժերով կանխենք: Անցնենք առաջ, վերադառնանք Տերյանին, անընդհատ վերադառնանք Տերյանին եւ փորձենք կամ շարունակել, կամ լրացնել:

Ձինվորները հայրենիքի՛ սահմաններն են ընդարձակում, պոետները՝ հոգո՛ւ: Պոետներն այս դեպքում նախ բանաստեղծներն ու արձակագիրներն են, ապա նաեւ երաժիշտներն ու նկարիչները: Նրանք, երբեմն անգամ իրենց ապահովության հաշվին, իրենց իսկ կյանքի գնով առաջ են մղում քաղաքակրթության սահմանները: Եթե մի հետադարձ հայացք ուղղենք, բոլորը մեկ առ մեկ կկանգնեն մեր աչքի առաջ: Այդպիսին էր նաեւ Վահան Տերյանը, որն իրոք ստեղծեց մի նոր գեղարվեստական իրականություն, մի նոր ցնորք, որ դարձավ կյանք: Կյանքն այն չէր, ինչ կար, բայց նրա ստեղծածը դարձավ կյանք: Նույնը չի կարելի ասել նրա կողքին ապրող հսկայի՝ Թումանյանի մասին. Թումանյանն իրական կյանքը դարձրեց գրականություն, եւ այդ գրականությունը նույնական էր իրական կյանքին:

Գիտական նվաճումների տարածքներն ակնհայտ են՝ կրակի գյուտից մինչեւ հրթիռ, նետուաղեղից մինչեւ միջուկային զենք: Գիտության նվաճումը համաշխարհային բնույթ ունի:

Հոգեւոր-մտավոր նվաճումների տարածքները շատ նուրբ են, երբեմն աննկատ ու աներեւույթ: Այստեղ ոչ թե միագիծ զարգացում է, ինչպես գիտության մեջ, այլ անհատականությունների հաջորդականություն, ազգային մշակույթների առկայություն, ուր գործում է ավանդույթ, ազգային ավանդույթ հասկացությունը: Մեծագույն արժեքները, անշուշտ, ունեն համաշխարհային նշանակություն: Կարելի է ստեղծել հոգեւոր-մտավոր նվաճումների սահմաններն արձանագրող քարտեզ՝ ազգային, համաշխարհային, ինչը, սակայն, հեշտ բան չէ:

Տերյանի գրական սահմանները, Տերյանի գրական ազդեցության շրջագիծն ակնհայտ են: Պետք է կարողանալ ամեն ինչ արձանագրել, հակառակ դեպքում մտավոր գրանցում չի ստանա: Կմնա որպես բնութագիր, բայց չի արտացոլվի նվաճումների մեջ: Իսկ դա էլ հեշտ չէ: Դե, գրանցեք այս տողերը.

Ես տառապանքս բախտ եմ համարում
Եվ ծիծաղում եմ ձեր բախտի վրա...

Սա մարդն է, հերոսը, ճակատագիրը, պատմությունը, այն, որին ասում ենք ինչ, բայց Տերյանի **ինչն** անհնարին է առանձնացնել եւ ինչպեսից, եւ ովից:

Տերյանն ինչքան եվրոպական մշակույթի կրող էր, նույնքան, եւ ավելի, գալիս էր ազգայինի խորքերից, հայկականության մագմայից: Հապա մի ուշադիր հայացք նետեք հայոց ճարտարապետությանը՝ մեր տաճարներին ու ամրոցներին, հայոց երաժշտությանը՝ թե՛ հոգեւոր, թե՛ ժողովրդական, եւ վերստին թերթեք Տերյանի պոեզիան: Եվ խորքային կառուցվածքով, եւ արտաքին զարդանախշով դրանք շատ նույնական են: Բառերի կրկնություն-կրկներգերը համեմատեք շենքերի քիվերի հետ, անկյունների ու կամուրջների քարե դարձածալերի հետ: Նույն կերպ Տերյանի չափածո խոսքի կառուցվածքը համեմատեք հոգեւոր ու ժողովրդական երգերի կրկնաբերումների, անցումների, զարգացումների, շրջադարձերի հետ: Ամեն ինչ նո՛ույնն է: Նո՛ույնն է նաեւ ոսկե հատման օրենքը, որ համամասնության գաղտնիքն է՝ համաչափության եւ ներդաշնակության պահանջով: Այդպես էին կառուցվում եկեղեցիները, այդպես էին գրվում տաղերն ու ողբերը...

Շարունակությունը՝ էջ 8

Երեւանի դեսական համալսարանի մասնակցությունը Հայրենական մեծ դատերազմի տարիներին ռազմահայրենասիրական, զորահավաքային եւ թիկունքային աշխատանքներին

Սկիզբը՝ էջ 6

Առանձնապես մեծ տպավորություն գործեցին երկրաբանական ֆակուլտետի ուսանող Սասունիկ Գրիգորյանի եւ պատմության ֆակուլտետի ուսանող Մուշեղ Սաֆարյանի նամակները: Համալսարանի սաները դասընկերներին ու դասախոսներին հավաստիացնում էին, որ իրենք կարմիր բանակի շարքերում կկռվեն ու կպայքարեն հայրենասիրաբար եւ բարձր կպահեն սիրելի համալսարանի պատիվն ու հեղինակությունը: Շատ հուզիչ էր Գրիգորյանի նամակի ավարտական մասը. «Սիրելի՛ Պետիկ, ինչպես գիտես, ես ծնողներիս միակ տղան եմ: Այլեւս նրանց մոտիկից մխիթարելու եւ ուրախություն պատճառելու հնարավորություն չունեմ: Չնայած նրանք ուրախալից նամակներ են գրում ինձ, բայց ներքուստ հասկանում եմ, որ դա նրանց վիճակի իսկական պատկերը չէ: Խնդրում եմ, ընկերների հետ հաճախակի այցելեք նրանց եւ մխիթարեք իմ փոխարեն: Ես հավատով լցված եմ մեր հաղթանակի նկատմամբ, բայց թե կվիճակվի՞ ինձ վերադառնալ եւ նորից գրկախառնվել նրանց հետ, դժվարանում եմ ասել: Եթե հազարավոր եղբայր ռազմիկների հետ ընկնեմ ռազմադաշտում, իմացեք որ նրանք կընդունեն ձեզ իմ փոխարեն» (***Փ. Ենգոյան,*** *Երեւանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 15*):

Հաջորդ օրը՝ առավոտյան, երկրաբանական եւ աշխարհագրական ֆակուլտետի ուսանողները, որոնք ապրում էին հանրակացարանում, այցելության գնացին Սասունիկ Գրիգորյանի ծնողներին՝ թաքցնելով նրանցից իրենց որդու գրած նամակի բովանդակությունը: Հետեւելով նրանց օրինակին՝ օգոստոսի 31-ին ուսանողները նման այցելություններ կազմակերպեցին կարմիր բանակ մեկնած այն ընկերների ծնողներին, որոնք ապրում էին Երեւանում: Այդ օրը համալսարանի բոլոր ուսանողների հիշողության մեջ մնաց որպես այցելությունների օր՝ ի պատիվ իրենց հայրենասեր ընկերների ու նրանց ծնողների:

1941 թ. սեպտեմբերի մեկին՝ վաղ առավոտյան, հարազատ համալսարանը նորից բացեց դռներն իր սաների առաջ: Այդ օրը դասախոսները նախօրոք հանձնարարություն էին ստացել պարապմունքի առաջին մեկ ժամվա ընթացքում հաղորդումներ անելու բուհերի վերաբերյալ կուսակցության եւ կառավարության նոր առաջադրանքների մասին՝ պայմանավորված երկրի պատերազմական վիճակով, նաեւ պարզաբանելու համալսարանում անցկացվելիք ռազմահայրենասիրական միջոցառումները:

Անցան ուսումնական տարվա առաջին երկու շաբաթները: Սեպտեմբերի 16-ին հրավիրվեց համալսարանի կուսակցական եւ կոմերիտական ակտիվի միացյալ նիստ: Հրապարակվեց ՀԿԿ կենտկոմի որոշումը՝ բոլոր հիմնարկներում աշխարհազոր կազմակերպելու մասին: Այդ որոշման մեջ ասված էր, որ պատերազմի ժամանակաշրջանում հանրապետության կուսակցական ու հասարակական կազմակերպությունների կարեւորագույն խնդիրներից մեկն էլ այն է, որ նրանց ջանքերով քաղաքներում, գյուղերում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ձեռնարկություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվեն ժողովրդական աշխարհազորեր, եւ նրանց միջոցով ամեն կերպ զարկ տրվի աշխատավորության ռազմական ուսուցմանը:

Համալսարանի կուսակցական ակտիվի նիստը որոշեց ստեղծել աշխարհազորային վաշտեր, հրամանատարներ նշանակել զինվորական գործն իմացող սպաների, իսկ քաղաքացիական գծով տեղակալներ՝ կուսակցական կոմիտեի եւ ֆակուլտետային բյուրոների քարտուղարներին (*տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 4, թ. 28*): Ակտիվի նիստի որոշմամբ համալսարանի աշխարհազորի ընդհանուր հրամանատար նշանակվեց ռազմական ամբիոնի դասախոս լեյտենանտ Արտիկ Միքայելյանը, իսկ կոմիսար՝ առաջին քարտուղար Դավիթ Դավթյանը: Աշխարհազորերում ուսանողության ու դասախոսական կազմի ռազմապաշտպանական ուսուցման գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանի վրա:

1941 թ. սեպտեմբերի 17-ին համալսարանի բակում հավաքվեցին բոլոր դասախոսները, վարչական համակարգի աշխատողներն ու ուսանողները: Տեղում, ըստ ֆակուլտետների, նշանակվեցին դասակների հրամանատարներ ու քաղաքացիական գծով նրանց տեղակալներ: Աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանն աշխարհազորականներին ծանոթացրեց ռազմապաշտպանական ուսուցման ծրագրերին եւ հրապարակեց պարապմունքների կայուն օրերն ու ժամերը: Եվ, այսպես, սեպտեմբեր ամսից մասնագիտական ուսուցմանը զուգընթաց սկիզբ դրվեց կոլեկտիվի անդամների ռազմական ուսուցմանը: Աշխարհազորի ընդհանուր ծրագրին համապատասխան՝ ուսումնասիրվում էին ռազմավարության ու մարտավարության, ժամանակակից զենքի ու պատերազմի տեսակների եւ պրակտիկ մարտավարական վարժությունների հարցեր:

Համալսարանի աշխարհազորայիններն ակտիվորեն մասնակցում էին նաեւ մայրաքաղաքի տարբեր մասերում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կառույցներին:

Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի որոշման համաձայն՝ ՀԿԿ կենտկոմը տեղական կուսկազմակերպություններին հանձնարարեց կարեւոր արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպել զինված պաշտպանության գործը, ռազմավարական կարեւորագույն հաղորդակցություններում, քաղաքներում եւ այլ բնակավայրերի մատույցներում կառուցել հակաօդային կրակակետեր, հակատանկային արգելքներ, խրամատներ եւ պաշտպանական այլ հենակետեր (*տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 18, թ. 11, 12*): Այդ ամբողջ աշխատանքը պետք է կատարվեր բնակչության ուժերով եւ միջոցներով:

Կատարելով ՀԿԿ կենտկոմի հանձնարարությունը՝ համալսարանի աշխարհազորայիններն իրենց ուժերով խրամատներ ու հակատանկային արգելակներ կառուցեցին Նորքում, Քանաքեռի շրջակայքում եւ մասնակցեցին մայրաքաղաքի կարեւոր ձեռնարկությունների շրջակայքում ռազմապաշպանական նշանակություն ունեցող կառույցների շինարարությանը: Աշխարհազորային պարապմունքները հաջող կազմակերպելու եւ մայրաքաղաքի ռազմապաշտպանական կառույցներին ակտիվորեն մասնակցելու համար 1941 թ. հոկտեմբերին համալսարանի կոլեկտիվը շնորհակալագիր ստացավ Երեւանի կայազորի հրամանատարից: Շնորհակալագիրն ստանալիս աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը հավաստիացրեց, որ այսուհետեւ աշխարհազորում ռազմական ուսուցումը կկազմակերպվի այնպես, որ ամեն մի աշխարհազորական դասախոս թե ուսանող դառնա պատրաստի մարտիկ: Եվ իրոք, գործող բանակ մեկնած բազմաթիվ համալսարանականներն ընկերներին գրած նամակներում հիշատակում էին, որ աշխարհազորի պարապմունքների ժամանակ իրենց ռազմական գիտելիքները շատ օգտակար են եղել ռազմադաշտում:

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԿՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՆԱՆԵ՛, ՆԱՆԵ՛, ԿՐԱ՛Կ ՏՈՒՐ ԻՆՁ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Սկիզբը՝ էջ 6

Ավանդազրույցների վրա են հիմնված «Հերն ու որդին», «Պառավի ուլերը», «Շվոտի հեքիաթը»:

Մանուկների շրջանում առ այսօր պահպանվող հավատալիքների հետ է կապված «Էշի զռոցի հեքիաթը». եթե աղջնակները էշի զռոցի հետ քաշեն իրենց մազերը, մազերը կերկարեն, իսկ եթե ծափ տան ու պարեն, ապա չեն մեծանա: Հավատալիքների հետ է կապված «Արեւով անձրեւի հեքիաթը»: Ասում են՝ եթե արեւ է, ու անձրեւ է գալիս, ապա գյուղի դիմացի սարի լանջի անտառում գայլը ձագեր է ծնում: «Մողեսի պոչի հեքիաթի» սյուժեն եւս ժողովրդական բանահյուսությունից է. պահպանվում է հավատալիք, որ եթե մողեսի կտրած պոչը մարդ պահի իր մոտ, ապա անպայման մի հաջողություն կունենա: Բանահյուսական այս կտորի վրա հեղինակը կառուցում է խրատական ավարտը. «Թանկ է պոչիկը, սակայն գլուխը՝ թանկ առավել»: Հասկացողը կհասկանա:

«Ծաղկահեքիաթն» ամբողջությամբ հավատալիքների շարան է: Այսպես, եթե մարդու այտը վառվում է, ապա նրան բամբասում են: Եթե մարդու ականջը «կանչում» է, ապա նա անպայման մի լուր կլսի: Եթե մարդու աչքը «սառում» է, ապա հյուր կունենա... Այս հավատալիքներն այսօր առատորեն զարդարում են հեշտիացիների առօրյան:

«Արջը՝ կեսուր, Նանեն՝ հարս» խաղիկն արջի ու աղջկա թափառող սյուժեի Մշո—Կարնո—Ջավախքի տարբերակն է, որ այսօր էլ պատմում են Վիկտոր Հովսեփյանի ծննդավայրում: Ընդ որում՝ պատմությանը սովորաբար նախորդում է մանկական խաղիկը, որն ավելի հաճախ թոռնուհիների մազերը սանրելիս են երգում տատիկները.

«Արջու փլերն մավի ին,
Արջն աղջկաս դավի է,
Արջու փլերն մասուր ին,
Արջն աղջկաս կեսուր է»:

Անզուգական կտոր է «Հեքիաթի ձիու հեքիաթը», որը պատմում է այն մասին, թե ինչպես մանուկ հասակից հեքիաթի ձիու հեքիաթը լսած բանաստեղծը որոշում է ստուգել հեքիաթի ստուգությունը, թե՝ ճի՞շտ է, որ աստղերին մոտ՝ քունքը ձյունոտ լեռան ստորոտի լճում, ճոխ պոչով ու փրփուր բաշով ձի կա: Հեղինակի ծննդավայրում այսօր էլ պատմում են այս հեքիաթը, որ, այո՛, Աբուլ լեռան ստորոտի ականակիտ լճի հատակին հրեղեն-ջրեղեն ձի կա, ու այս ձին ժամանակ առ ժամանակ ալեկոծում է ջրի ջինջ հայելին, դուրս է գալիս լճից, սուրում-սավառնում է դեպի արեւը, մի պահ փակում հրե գունդն ու նույն թափով գալիս է հետ, մխրճվում լճի ջրերի մեջ՝ ջրի հայելուն գծելով աստիճանաբար մարող կոհակներ... Այս պատմությունը «Սասունցի Դավիթ» էպոսի Սանասարի ձիու պատմությունն է հիշեցնում: Սանասարի ձին՝ Քուռկիկ Ջալալին էլ ջրի թագավորությունում էր ապրում ու իրեն հեծնել կամեցող հերոսին մերթ վեր հանելով, արեւին հասցնելով՝ ուզում էր այրել, մերթ վար բերելով, քարերին տալով՝ ջախջախել էր ուզում նրան: Ու հրեղեն-ջրեղեն Սանասարը մեկ ձիու կռնակին էր խաղում, մեկ՝ նրա փորի տակ...

«Հեքիաթի ձիու հեքիաթը» Վիկտոր Հովսեփյանը յուրովի է ավարտում. քնարական հերոսը լճի մով հայելուն նայում ու խաբկանքի մեջ է ընկնում՝ հայելում տեսնելով Պեգաս դարձած իր իսկ ձիու... ցոլքը:

Մանկական ստեղծագործությունները «Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ» խորագրի տակ հավաքել է ինքը՝ հեղինակը: Այս նույն անվանումով տատ ու թոռան խաղը Հեշտիայում այսօր էլ տարածված է: Տատը զույգ ձեռքի մատներն իրար է հպում՝ ափերը փոքր-ինչ բաց պահած, ու թոռը տատի ճկույթ մատների հպման կետին դնում է իր ցուցամատն ու խնդրում տատին. «Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ»: «Ել վերի թարեքն» (բարձացիր վեր),— ասում է տատը: Այս խաղը հեշտիացիների պապերը Կարինից ու Մուշից են իրենց հետ բերել-հասցրել Ջավախք: Այն Նանե դիցուհու հիշողությունն ունի իր մեջ, եթե նկատի ունենանք, որ Նանեն՝ Արամազդի դուստրը, հայոց դիցարանի իմաստնության լույսի հովանավորն ու պաշտպանն է, իսկ հայ ընտանիքներում իմաստնության լույսի ակունքն ու հովանավորը ընտանիքի Մեծ Մայրն է, որին եւ տվել են Արամազդ աստծո իմաստուն դստեր՝ Նանեի անունը: «Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ». ասել է թե՝ «Տատի՛, տատի՛, կրա՛կ տուր ինձ»... Այս կրակը իմացության այն լույսն է, որի պահապանն էր Նանե դիցուհին, որի պահապանն է ընտանիքի տատը՝ նանեն: Այսպիսին է եղել Վիկտոր Հովսեփյանի Խազո նանեն՝ 40 տարեկանից անկողնուն գամված կինը, որ ասք ու հեքիաթներով իր փեշին կապած է պահել թոռներին՝ Աստվածաշնչով ու ժողովրդական իմաստնությամբ նրանց աչքերը բացելով կենաց խորհրդի վրա: Ինչպես վերեւում նշվեց, «Նանե՛, նանե՛, կրա՛կ տուր ինձ» գրքում երկու նանե կա, մեկը՝ իմաստուն տատը, որից թոռն իմացության լույս է աղերսում, մյուսը՝ փոքրիկ Նանեն՝ իմաստուն նանեի Նանե ծոռնուհին... Խաբկանքի հասցնող այս շրջապտույտը մեռնող-հարություն առնող աստվածությունների գաղափարը լինի ասես, որ հատկանշական է հայ բանահյուսությանը...



* * *

Վիկտոր Հովսեփյանի գրական ժառանգության մաս են կազմում Վրաստանի Ջավախք աշխարհի (մասնավորապես՝ Նինոծմինդայի շրջանի Հեշտիա, Ուչմանա, Թորիա գյուղերի) ժողովրդական բանահյուսության գրառումները: Երկհատոր անտիպ բանահյուսական գրառումներն ամփոփում են ժողովրդական խաղեր, խաղիկներ, հանելուկներ, առածներ ու ասացվածքներ, հեքիաթներ: Բանաստեղծը գրառումներն անելիս երբեմն նաեւ ձայնագրել է ասացողներին: Այդ ձայնագրությունները եւս մեքենագիր տարբերակներին կից պահպանվում են Վիկտոր Հովսեփյանի թանգարանում: Առաջիկայում բանաստեղծի ընտանիքը, տիկնոջ՝ Թերեզա Հովսեփյանի նախաձեռնությամբ, նպատակ ունի տպագրել բանահյուսական գրառումները, որոնք կհարստացնեն հայ բանահյուսության շտեմարանը եւ, անտարակույս, իրենց նրբերանգը կավելացնեն Վրաստանի մշակութային գունեղ ներկապնակին:

Բոնդո ԱՐՎԵԼԱՁԵ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՑՆՈՐԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ



Սկիզբը՝ էջ 5, 7

Սրանք երկրի ձայները, գույներն ու ձեւերն են: Ոչ միայն բնության շարժվող երեւույթներն են ձայների մեջ, ինչպես քամին, անձրեւը, անտառը, որոտն ու կայծակը, գետն ու ջրվեժը, որտեղից եւ բառերի ձայնային կուտակումից առաջացած բաղաձայնույթն ու առձայնույթը, այլեւ լռության իրենց ձայնն ունեն հողն ու քարը, գերեզմանն ու ընդերքը: Նրանց ձայնը թրթռուն լռությունն է: Տերյանն այս լռության ձայնը լսեց: Բանաստեղծություններ ունի, որոնք լուռ են՝ դաշտում ընկած քարի նման, քերծից պոկված գետափի ժայռաբեկորի նման, չորացած ծառի նման: Այդ լռությունը պատյան է, որի մեջ ցաված հոգին է: Իսկ երբ այդ լռությունը ձայնարկում է, այսինքն՝ երբ հողը տնքում է երկրաշարժից առաջ, երբ հանգուցյալները շարժվում են գերեզմաններում, երբ քարը ճաքում է, իսկ ժայռաբեկորն ընկնում եւ խուլ դղրդյունով գլորվում ձորը, երբ ընդերքը հառաչում է, դրանք արդեն վտանգավոր ձայներ են՝ փլուզումի ու երկրաշարժի, մահվան ու հոգիների ձայներ, որ բնությունը պահում է իր մեջ: Այդպես, ինչպես բնությունն է իր կործանարար ձայները պահում ընդերքում, նույն կերպ Տերյանն է իր ցավի ձայները խլացնում իր հոգու մեջ: Ինքը մահվան մեջ է, բայց լռեցնում է մահվան ձայնը: Ահա այսպես են ծնվում նրա լուռ, երբեմն անգամ աննկատ մնացող ու մնացած բանաստեղծությունները:

Բառի իմաստային, հնչյունական, ձեւակառուցվածքային հնարավորություններն անսահման են, եւ դա այն աստիճանի, որ շատ լուրջը կարող է վերածվել ձեռնածության, ինչպես այս հանգաբանությունը՝ *Յարոսլավնա — յարոս լավն ա:* Տերյանը, լինելով խոսքի վարպետ, երբեք չդիմեց այսպիսի հասարակաբանության: Նույն կերպ բառը նկարչական ընկալումով կարող է բազմաթիվ հնարավորություններ ընձեռել: Ասենք, կարելի է բառերով նկարել կամ դիմել բառապատկերային հեշտ, դրանով իսկ վանող խտացումների, որ վերածվում են մակդիրի: Այսպես՝ աչքերի մեջ բիբերի փոխարեն կայծակներ էին շողարձակում, հայացքի մեջ հրդեհի բոց էր, հոգում ու աչքերին՝ ջրհեղեղ:

Ահա Տերյանը երբեք չգնաց նաեւ ներդաշնակության ներքին ձեւը վնասող այսպիսի ցցուն պատկերների: Նրա համեմատության եզրերը շատ համահունչ են, իմաստով մոտիկ, որ բացվելով դառնում են համեմատություն, սեղմվելով՝ վերածվում մակդիրի: Տերյանը մնաց իր տեսիլքների ու ցնորքների բանաստեղծը բոլոր նրբերանգների մեջ: Այդ իսկ պատճառով նրա պոեզիան եւ ամբողջական է, եւ համամարդկային, եւ համադրական:

Համադրականության գծի շարունակության մասին՝ որպես բազմաձայնություն, որպես համանվագայնություն, խոսեցի նախորդ էջերում: Տերյանը կանխեց, Չարենցը «ոստնային մտածողությամբ» սահմանափակեց, Սեւակն արդեն զգուշացրեց, որ այս տեսության սխալ զարգացումը վնասակար է գեղարվեստի համար. այլեւս կարող է լինել սինթետիկ (արհեստական) կաուչուկ, կարող է լինել համակցված սնունդ, բայց ոչ արհեստական (քիմիական) պոեզիա, որ ոմանք ձեւակերպում են այսպես՝ ժամանակակից բանաստեղծությունը պետք է կառուցել: Մինչդեռ կառուցում են շենքն ու երկիրը, արհեստական (քիմիական) միջոցներով ստանում են ներկեր, սոսինձ, շատ բան, իսկ պոեզիան ստեղծո՛ւմ են: Իր պատկերացրած հայ գրականության գալիք օրը Տերյանն այլ կերպ էր տեսնում:

Իսկ սա նշանակում է, որ Տերյանի պահանջները կենդանի են: Անկախ տարատեսակ ձեւափոխություններից՝ պոեզիան նախ կենդանի ու ապրեցնող խոսք պիտի լինի՝ ուղղված իրական ընթերցողին: Մինչդեռ խոսքը մեռած է, իսկ ընթերցողը՝ պայմանական: Ուրեմն իրապես «Տերյանը պահանջում է»:

Որքան կյանքը դժվարանում է, այնքան բարձրանում է պոեզիայի արժեքը: Կյանքի դժվարությունը Տերյանի համար սոցիալական չէր, այլ նախ հոգեբանական էր, հետո, հայոց ցեղասպանության հետ կապված, հայրենասիրական եւ վերջում, հեղափոխական վերափոխումներով պայմանավորված՝ հանրային:

Բայց Տերյանը, առաջին հերթին, մարդու հոգեբանական ներաշխարհի բանաստեղծն էր: Նա տեսավ նոր ժամանակների նոր մարդուն, տեսավ նրան ամենաթանկ ապրումների մեջ, որ սերն է՝ դրսեւորման բոլոր ձեւերով, որ մարդկային հարաբերությունների մշակույթն է՝ առնչության բոլոր տարբերակներով, որ մարդու եւ ժամանակի նախ հոգեբանական ու բարոյական, ապա նաեւ հանրային ու քաղաքացիական կապն է՝ հնարավոր բոլոր դրսեւորումներով: Բնական են եւ մարդը, եւ խոսքը: Այս կենսատարածքում Տերյանն ստեղծեց իր բարձրարժեք պոեզիան, որ արվեստի վերածված մենախոսական աղոթք է:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.09.2020 թ.
Տպաքանակը՝ 1175